

**«ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ՝ ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ»**  
**ՔԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑԻԿ**  
**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Աղյուսակ 1

<b>1. Մշտադիտարկման խմբի կազմը</b> /անուն, ազգանուն, պաշտոն կամ կուրս/		
Ղեկավար	1	Գևորգ Նալբանդյան
ՊԴ կազմից անդամներ	2	Արևիկ Ղարիբյան
	3	Տիգրան Պետրոսյան
	4	Արմենուհի Մելքոնյան
	5	Եվա Բարեղամյան
Ուսանող անդամներ	6	Նարեկ Գևորգյան
	7	Սոնա Դանիելյան
Արտաքին շահակից	8	Մկրտիչ Ավագյան
	9	Անահիտ Աղաջանյան

Աղյուսակ 2

<b>2. Մշտադիտարկվող կրթական ծրագիրը</b> Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա 101401.02.6	
Ուսուցման ձևը /առկա, հեռակա/	Առկա
Շնորհվող որակավորումը	Սպորտի բակալավր
Ծրագրի մեկնարկային տարին	2020-2021
Ծրագրի նախորդ մշտադիտարկման ամսաթիվը (առկայության դեպքում)	-
Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը	-

<b>3. Նախորդ մշտադիտարկման արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը</b>			
	Միջոցառում (գործողություն)	Կատարողականը	Ժամկետ
1.	Կրթական ծրագիրը մշտադիտարկում անցնում է առաջին անգամ		
2.			
3.			
4.			
5.			

<b>4. Ծրագրի քանակական ցուցանիշները</b>						
Ուսումնական տարի	2021–2022		2022–2023		2023–2024	
	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա
<b>Ընդունելությունը և ուսանողական համակազմը</b>						
Դիմորդների թիվը	73	30	68	36	38	17
Ընդունելության մրցութային ցուցանիշը	8 /ներբուհական/	8 /ներբուհական/	23.25	22	22.75	25
Անցողիկ շեմային միավորը	16	16	16	16	15	15
Ընդունված ուսանողների թվաքանակը	66	29	19	9	21	8
Ընդունելության միջին միավորը	15.75 /ներբուհական/	12.72 /ներբուհական/	29.21	27.05	30.36	28.06
Հաճախումները (%)	83.9	94.6	76.3	87	76.5	83.3
Բացակայությունների հնարավոր պատճառները	Մրցումների մասնակցություն, հիվանդության պատճառներ		Մրցումների մասնակցություն, հիվանդության պատճառներ		Մրցումների մասնակցություն, հիվանդության պատճառներ	
<b>Ուսումնական առաջադիմության ցուցանիշները</b>						
«Գրագանց»,	8.62%	18.6%	9.51%	37.94%	13.78%	28.68%

«լավ» և «բավարար» գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով)	29.31% 62%	16.27% 65.13%	12.45% 78.03%	18.34% 43.7%	15.14% 71.06%	33.01% 38.29%
Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումար ային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)	77.66	79.80	73.62	81.78	68.07	82.97
Ուսանողների ներքին շարժունություն	-	-	-	+1	-	+1
Ուսանողների արտաքին շարժունություն	-	-	-	-	-	-
Սահմանափակ կարողություններով ուսանողների ներգրավվածություն	1	1				
Հեռացված ուսանողների թիվը՝ պատճառներով	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում	Ակադեմիական պարտք, ֆինանսական խնդիրներ, անձնական դիմում
Ուսուցման իրավունքը վերականգնած ուսանողների թիվը	14	5	23	5	10	2
<b>Ներքին և արտաքին շահակիցների հետ անցկացված հարցումները</b>						
Ուսանողների կողմից դասախոսների	<a href="#"><u>ՀՖԿՄՊԻ-ում դասավանդման որակի և դասընթացի</u></a>		<a href="#"><u>ՀՖԿՄՊԻ -ում դասընթացի և դասավանդման</u></a>			

գնահատման արդյունքներ	<a href="#">արդյունավետության գնահատում</a>	<a href="#">որակի ու արդյունավետության գնահատում. 2022-2023 ուստարի, 1-ին կիսամյակ</a>  <a href="#">ՀՖԿՍՊԻ-ում դասընթացի և դասավանդման որակի ու արդյունավետության գնահատում. 2022-2023 ուստարի, 2-րդ կիսամյակ</a>	
<p>Ուսանողների կողմից ուսումնառման դակ ռեսուրսների գնահատման արդյունքներ</p>	<p>Բուժում կրթության մեջ ժամանակակից տեխնիկական ռեսուրսներով (օրինակ՝ ինտերակտիվ լսարաններով) ապահովվածության մակարդակը այս տարի նույնպես բարձրացել է նախորդ տարվա նկատմամբ: Վերջինիս «գերազանց» գնահատողների տոկոսը 23%-ից բարձրացել է 29%, «լավ»-ինը՝ 44%-ից 48%:</p> <p>Բուժի այս տարվա շրջանավարտներն առավել բարձր («գերազանց» և «լավ») գնահատականներ են տվել բուժի հետևյալ ռեսուրսներին/ծառայություններին.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինստիտուտի կարիերայի կենտրոնին (73%՝ նախորդ տարվա 60%-ի դիմաց)</li> <li>• Լսարանների վիճակը և կահավորանքը (71%՝</li> </ul>	<p>Բուժում իրականացված բարեփոխումները լսարանների վիճակի և կահավորման վերաբերյալ տարեց տարի դրական դինամիկա են արձանագրում:</p> <p>Հարցված շրջանավարտները ուսումնառման դակ ռեսուրսը գնահատում են կամ գերազանց կամ լավ:</p> <p>Այս կրթական ծրագրի բակալավրիատի շրջանավարտները բուժի կողմից տրամադրվող ռեսուրսները գնահատել են հետևյալ կերպ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Լսարանների վիճակը և կահավորանքը»՝ 100% լավ</li> <li>• Մարզադահլիճների վիճակը և</li> </ul>	

	<p>նախորդ տարվա 63%-ի դիմաց)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինստիտուտի համակարգչային սրահների վիճակը, կահավորանքը և մատչելիությունը (70%՝ նախորդ տարվա 60%-ի դիմաց)</li> <li>• Համացանցի մատչելիությունը բուհում (65%՝ նախորդ տարվա 63%-ի դիմաց)</li> <li>• Ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունը սարքավորումներով (58%՝ նախորդ տարվա 49%-ի դիմաց):</li> </ul> <p>Ստացվում է, որ 2022թ-ին բարելավվել են բուհի նշված բոլոր ռեսուրսներն ու ծառայությունները:</p>	<p>կահավորանքը՝ 42% գերազանց, 33% բավարար, 25% անբավարար</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունը սարքավորումներով՝ 50% գերազանց, 42% բավարար, 8% անբավարար</li> <li>• Ինստիտուտի համակարգչային սրահների վիճակը, կահավորանքը և մատչելիությունը՝ 41% գերազանց, 17% լավ, 42% բավարար</li> <li>• Համացանցի հասանելիությունը ԲՈՒՀ-ում՝ 42% գերազանց, 25% լավ, 25% բավարար</li> <li>• Գրադարանի կահավորվածությունն ու գրադարանային ռեսուրսների հասանելիությունը՝ 58% գերազանց, 33% լավ, 8% բավարար</li> <li>• Մասնագիտական գրականության առկայությունը՝ 42% գերազանց, 25% լավ, 8% բավարար, 8% անբավարար:</li> </ul>	
--	---	--	--

<p>Ուսանողների կողմից կրթական և լրացուցիչ խորհրդատվությունների գնահատման արդյունքներ</p>	<p>Ուսանողների կեսից ավելին մեծամասամբ իրազեկված են իրենց իրավունքների և պարտականությունների, բուհում առկա ուսման վարձի զեղչման կարգի, ինչպես նաև մասնագիտության կրթական ծրագրի (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն) վերաբերյալ: ՑԲ էջն ունի առաջնային նշանակություն ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին տեղակատվության հաղորդման տեսանկյունից: Ուսանողների 57%-ը բուհի ֆեյսբուքյան էջից են տեղեկանում վերջինիս գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին, դասախոսներից՝ 44%-ը, իսկ բուհի պաշտոնական կայքից՝ 30%-ը</p> <p>Ուսանողական գիտական ընկերության կատարած աշխատանքից գոհ են ուսանողների միայն 37%-ը, որը կապված է այն հանգամանքի հետ, որ ուսանողների գրեթե 40%-ը</p>	<p>Բուհում ներքին շահակիցներին իրենց վերաբերելի ողջ տեղեկատվությունը փոխանցվում է պաշտոնական մեյլինգի («sported.am») միջոցով: Սակայն, ՈԱԲ մշտադիտարկումները պարզել են, որ այդ համակարգը թույլ կիրառելիություն ունի ուսանողների կողմից: Վերջիններս նշում են, որ անհրաժեշտ տեղեկատվություն կամ նյութեր ստանում են շփումների կամ այլ հարթակների միջոցով:</p> <p><a href="#"><u>ՊորՖեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի ֆոկուս խմբային քննարկում</u></a></p>	
--	---	---	--

	<p>ը ծանոթ չեն կամ չեն առնչվել վերջինիս գործունեության հետ:</p> <p>Ուսանողական խորհրդի գործունեության մասին նույնպես շատ ուսանողներ (33%) տեղյակ չեն և միայն 41%-ն է գոհ վերջինիս գործունեությունից: Բացի իրազեկվածության բարձրացումից, ՈՒԽ-ի առավել ակտիվ գործունեությունը ուղղված ուսանողների խնդիրների բացահայտմանն ու բուհի ղեկավարության մոտ դրանց բարձրաձայնմանը (օրինակ՝ կապված ուսման վարձերի ու զեղչերի հետ), նույնպես մեծ ազդեցություն կարող է ունենալ վերջինիս հեղինակության բարձրացման և ճանաչման վրա:</p> <p>Ինչ վերաբերում է բուհում կրթության որակին, ՀՖԿՍՊԻ ուսանողները հիմնականում գոհունակություն են արտահայտել այս հարցի շուրջ: Չնայած որոշ դժգոհություններին (օրինակ այն, որ դասախոսներ լավ չեն տիրապետում արդյունավետ ուսուցման մեթոդներին, չունեն պատասխանատվության բարձր զգացում,</p>		
--	--	--	--

	<p>մոտիվացիա), ՀՖԿՍՊԻ ուսանողները բարձր են գնահատում բուհի դասախոսների արհեստավարժության մակարդակը. 83%-ը համարում է, որ ՊԴ կազմից շատերը կամ գրեթե բոլորը արհեստավարժ, հմուտ մասնագետներ են:</p> <p>Հարցվածների 42%-ը կարծում է, որ բուհում ուսումնական գործընթացը տալիս է իրենց անհրաժեշտ պրակտիկ հմտություններ, 47%-ին մասամբ է տալիս, իսկ 7.6%-ին գրեթե չի տալիս այդպիսի հմտություններ:</p> <p>ՀՖԿՍՊԻ գնահատման համակարգում հաճախումներին 20 միավոր հատկացնելու վերջին որոշմանը դրական են վերաբերում ուսանողների գրեթե կեսը՝ 53%-ը:</p> <p>Ստուգարքները քննություններով փոխարինելու բուհի որոշմանը ուսանողների գրեթե կեսը՝ 46%-ը բացասաբար է վերաբերում: 20%-ը չեզոք կարծիքի են, և միայն 29%-ն են դրական վերաբերում այս որոշմանը:</p> <p>ՀՖԿՍՊԻ ուսանողների գերակշիռ մեծամասնությունը՝ 69%-ը ոչ մի</p>		
--	--	--	--

	<p>գիտահետազոտական աշխատանք չի իրականացրել: Վերջինիս պատճառը կապված է ինչպես կրթական ծրագրերում համապատասխան պահանջների, այնպես էլ ուսանողների մոտ համապատասխան մոտիվացիայի պակասի հետ: Շատերը ակնկալում են նյութական խրախուսում/վարձատրություն, բուհի կողմից ներգրավում որևէ հետաքրքիր հետազոտական նախագծում կամ համապատասխան կրեդիտներ՝ գիտահետազոտական աշխատանքներում առավել շատ ներգրավվածության դեպքում:</p>		
<p>Ուսանողների կողմից պրակտիկայի գնահատման արդյունքներ</p>	<p>Մասնագիտական պրակտիկան այս տարի կազմակերպված է եղել պրակտիկայի ծրագրին համապատասխան՝ ըստ հարցվողների 65%-ի: Պրակտիկայի նպատակը հասկանալի/մատչելի է եղել կինոգիոլոգների 82%-ին, կինեգիոլոգների 76%-ը պրակտիկան արդյունավետ է համարել գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման տեսանկյունից, Պրակտիկայի ընթացքում</p>	<p>Կրթական ծրագրի հարցված ուսանողների գրեթե կեսն (46%) է պրակտիկայի սկզբում տրվել պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություն դրա անցկացման գործընթացի վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը հիմնականում տրվել է ամբիոնների կողմից (78%), այլ ոչ թե պրակտիկայի բաժնի (11%): Կինեգիոլոգների կեսն(54%) է կարծում,</p>	<p>Կրթական ծրագրի ուսանողները պրակտիկան անցել են 2 և ավելի վայրերում, որը գերազանցում է 100%-ը: Հարցված ուսանողները հիմնականում փաստում են, որ պրակտիկան կազմակերպվել է ծրագրին համապատասխան: Նոր գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից 75% ուսանողները հայտնել են իրենց</p>

	<p>տեսական և գործնական առաջադրանքները պարզ և հասկանալի են եղել կինեզիոլոգների 88%-ը</p> <p>Կինեզիոլոգներից 47%-ն է համամիտ այն կարծիքին, որ ուսումնառության ընթացքում իրենց յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները բավարար են պրակտիկ գործունեություն իրականացնելու համար: Պրակտիկա անցած ՀՖԿՍՊԻ կինեզիոլոգների 88% է այս տարի պրակտիկայի ընթացքում իրենց ձեռք բերած կարողությունները և փորձը կիրառելի համարում իրենց հետագա աշխատանքային գործունեության ընթացքում:</p> <p>Կինեզիոլոգների 88 տոկոսն է բավարարված բավարարված այս տարի ընդունող կազմակերպության աջակցությունից ու պատրաստակամությունից: Պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը գերազանց են գնահատել կինեզիոլոգների 53%-ը</p> <p>Պրակտիկան դեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը գերազանց</p>	<p>որ պրակտիկան կազմակերպվել է ծրագրին համապատասխան: Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի է եղել կինեզիոլոգների 69%-ի համար:</p> <p>Պրակտիկան գիտելիքների և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար արդյունավետ է եղել կինեզիոլոգների 54%-ի համար:</p> <p>Ուսումնառության ընթացքում յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները պրակտիկ գործունեություն իրականացնելու համար ամբողջությամբ բավարարել են կինեզիոլոգների միայն 31%-ին, իսկ մասամբ՝ 54%-ին:</p> <p>Ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում ամբողջությամբ բավարարել է կինեզիոլոգների միայն 38%-ին, մասամբ՝ 37%-ին:</p> <p>Պրակտիկայի</p>	<p>գոհունակությունը: Գործնական կարողությունների ձեռքբերման տեսանկյունից պատկերը գրեթե նույնն է:</p> <p>&lt;&lt;Պրակտիկայի ընթացքում ձեռքբերված կարողությունները և փորձը կարող են կիրառվել աշխատանքային գործունեության ընթացքում&gt;&gt; հարցին ուսանողների 65%-ը տվել են դրական պատասխան:</p> <p>Ուսումնառության ընթացքում տեսական և գործնական կարողությունները տեսական գիտելիքները մասամբ են բավարար պրակտիկ գործունեություն իրականացնելու համար ուսանողների 20%-ի համար, իսկ 30%-ի համար ընդհանրապես բավարար չեն: Նրանց 40%-ն է նշել դրական պատասխան: Պրակտիկան ընդունող կազմակերպության աջակցությունը անբավարար է գրանահատել ուսանողների 5%-ը, գերազանց,</p>
--	---	--	---

	<p>են գնահատել կինեզիոլոգների 47%-ը ինչ վերաբերում է պրակտիկայի տեսորի օգտակարությանն ու արդունավետությանը, ապա այս տարի փոքր ինչ բարձրացել է վերջինիս «գերազանց» գնահատողների թիվը՝ կինեզիոլոգների 35% (նախորդ տարվա 11% համեմատությամբ):</p> <p>կինեզիոլոգների գերակշիռ մասը՝ 76%-ը նախընտրում է պրակտիկան անցնել 2-րդ կուրսից, Կինեզիոլոգների 41%-ի ակնկալիքներն արդարացվել են այս տարվա պրակտիկայից:</p> <p><b>Հարցման արդյունքում ուսանողների կողմից պրակտիկայի արդյունավետության բարելավման առաջարկություններ:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կուրսնայի, որ համակարգչի միջոցով (3-7 մոնիտորի) տեսնելի պացիենտի կատարած աշխատանքը (երեխաների մոտ), հասկանալ, թե ինչն է լավ աշխատում և որ մկանախմբի թերությունները պետք է շտկել</li> <li>• Ուսանողներին բաժանել խմբերի, որպեսզի թերապիստի հետ լինի անհատական աշխատանք:</li> </ul>	<p>բազայում տեղի մասնագետի աշխատանքը գերազանց է գնահատել կինեզիոլոգների 31%-ը, լավ՝ 39%-ը, բավարար՝ 16%-ը:</p> <p>Պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը գերազանց է գնահատել կինեզիոլոգների 38%-ը, լավ՝ 38%-ը:</p> <p>Պրակտիկայի տևողությունը բավարար է եղել կինեզիոլոգների 38%-ը, անբավարար՝ 31%-ը, մասամբ բավարար՝ 23%-ը:</p> <p>Կինեզիոլոգների մեծամասնությունը (47%) կարծում է, որ պրակտիկայի համար 8 շաբաթը բավարար է:</p> <p>Կինեզիոլոգների գերակշիռ մասը՝ 92%-ը, կարծում է, որ պրակտիկան պետք է անցկացնել 2-րդ կուրսից:</p> <p>Կինեզիոլոգների 38%-ի համար պրակտիկայից ակնկալիքները ամբողջությամբ արդարացվել են, 46%-ի համար՝ մասամբ:</p> <p>Ըստ կինեզիոլոգների պրակտիկայի թերություններն են.</p>	<p>բավարար և լավ գնահատել է համապատասխանաբար 30%-ը, 30%-ը և 35%-ը: Մասնագետի աշխատանքը 1-5 բալային համակարգով գնահատվել է հետևյալ կերպ՝ գերազանց 40%, լավ 20%, բավարար՝ 40%:</p> <p>Պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքի բարելավման համար ուսանողները հայտնել են հետևյալ կարծիքը՝ պրակտիկա գնալ ավելի շուտ, քան 4-րդ կուրսում:</p> <p>Պրակտիկայի տևողության մասին ուսանողների 50%-ը կարծում է, որ այն բավարար չէ պրակտիկայի նպատակներին հասնելու համար, 55%-ը կարծում է, որ 8 շաբաթը բավարար է: Նրանցից 10%-ն է կարծում, որ պրակտիկայի տևողությունը պետք է դարձնել 9 շաբաթ և ավելի:</p> <p>Ուսանողների 35%-ը գտնում է, որ անհրաժեշտ է պրակտիկան անցնել 2-րդ կուրսից սկսած, 3-րդ կուրսից պրակտիկայի</p>
--	---	---	--

	<p><b>2021-2022 ուստարվա ընթացում ՈԱԲ-ի կողմից իրականացվել է նաև պրակտիկայի ՖԽՔ արդյունքների վերլուծություն</b>, ըստ որի 2021-2022 ուստարվա պրակտիկայից կինեզիոլոգներն առավել գոհ են հետևյալ պայմաններից/գործոններից.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պրակտիկայի սկզբում պրակտիկայի ծրագրի և պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,</li> <li>• Պրակտիկան կազմակերպումը վերջինիս ծրագրին համապատասխան,</li> <li>• Գիտելիքների և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար պրակտիկայի արդյունավետությունը</li> <li>• Տեսական և գործնական առաջադրանքների հստակությունը</li> <li>• Ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում և պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը, և</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• (Կարճ) տևողությունը</li> <li>• Կարմիր խաչի բազայում ոչ լիարժեք գիտելիքներ մատուցելը, պացիենտներ ի քիչ քանակությունը:</li> </ul> <p>Պրակտիկայի արդյունավետության բարելավման համար կինեզիոլոգները առաջարկել են</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ավելացնել պրակտիկայի վայրերը/բազաները</li> <li>• Բազմազանություն</li> <li>• Պարզապես ավելացրեք պրակտիկայի ժամանակը և հիվանդանոցների շարքը, որտեղ կանցնեն պրակտիկա</li> </ul>	<p>Նախընտրում են գնալ ուսանողների 65%-ը, իսկ 20%-ը՝ 4-րդ կուրսում:</p> <p>Ըստ հարցվածների, պրակտիկայի առավելությունն այն է, որ հնարավորություն ունեն բուժառուի հետ շփվել, ավելի լավ հասկանալ մասնագիտությունը: Որպես թերություն, բոլոր ուսանողները նշում են պրակտիկայի ուշ սկսելը և ժամանակի սղությունը: Ուսանողների ակնկալիքներն են՝ նոր հմտությունների ձեռքբերումը: Ընդհանուր առմամբ պրակտիկայի ընթացքում ուսանողների 68%-ի համար ակնկալիքները արդարացվել են, 21-ի մոտ մասամբ են արդարացվել, իսկ 11-ի մոտ չեն արդարացվել: Ըստ իրենց պրակտիկայի բարելավման համար անհրաժեշտ է, որ պրակտիկ դասերը լինեն ավելի շատ, պրակտիկան սկսվի 3-րդ կուրսում, իսկ ժամկետները՝ երկարացվեն: Ուսանողները լավ և</p>
--	---	---	--

	<p>պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) ոչ արդյունավետ աշխատանքի, ինչպես նաև պրակտիկայի ոչ բավարար տևողության հետ:</p> <p>Ըստ պրակտիկայի ՖԽՔ արդյունքների կինեզիոլոգները հիմնականում դժգոհ են մինչև պրակտիկայի մեկնելը բուհում անբավարար պրակտիկ հմտություններ յուրացնելու հանգամանքի, ինչպես նաև պրակտիկայի վայրում անբավարար աջակցություն ստանալու և պրակտիկ հմտությունները զարգացնելու անբավարար հնարավորությունների առկայության փաստի հետ</p>		<p>գերազանց են գնահատել անամենեզի քարտի օգտակարությունը՝ նշելով, որ դա օգնում է ավելի լավ պատկերացնել հիվանդությունը և բուժման արդյունքների գնահատումները: Ամփոփելով՝ 2023- 2024 ուսումնական տարվա մասնագիտական պրակտիկայի արդյունքները ուսանողների ակնկալիքները արդարացվել են 68%- համար: Պրակտիկան բարելավելու համար ուսանողների հիմնական առաջարկը վերաբերվել է դրա տևողության երկարաձգմանը:</p>
<p>Շրջանավարտն երի բավարարված ության հարցումների արդյունքները</p>	<p>Կինեզիոլոգների 63%- հայտնել է մասնագիտությամբ աշխատելու պատրաստակամության մասին Միջինում, հարցված շրջանավարտների 47% կարծիքով բուհում ուսումնառությունը մեծապես/շատ նպաստում է մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների</p>	<p>ՈԱԲ հարցմանը մասնակցած բակալավրիատի շրջանավարտների մեծամասնությունը (74-77%) փաստում է, որ ՀՖԿՍՊԻ-ում ուսումնառությունը նպաստում է մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը: ՀՖԿՍՊԻ շրջանավարտները</p>	

	<p>ծեռքբերմանը: Վերջիններս 44%-ն էլ հակված են այն մտքին, որ բուհում ուսումնառությունը որոշ չափով է նպաստում մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը:</p> <p>Շրջանավարտների 42% նշել է, որ իրենց մասնագիտական կրթական ծրագիրը հագեցած է եղել մասնագիտական դասընթացներով, նույնքան տոկոսի՝ 42%-ի համար այն որոշ չափով է հագեցած եղել,</p> <p>Կինեզիոլոգների 78% իրենց դասավանդող դասախոսներին համարել են շատ արհեստավարժ, իսկ 17%-ը՝ որոշ չափով: ՀՖԿՍՊԻ-ում ստացած գիտելիքները բուհն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ ըստ մասնագիտության աշխատանքի անցնելու համար լիովին բավարար են համարում կինեզիոլոգների 33%-ը, որոշ չափով բավարար՝ 46%-ը: Կինեզիոլոգների 38%-ը նշել են, որ լրացուցիչ վերապատրաստման շատ/մեծ կարիք ունեն,</p>	<p>նշում են, որ իրենց առարկայացանկում <i>մասնագիտական և պրակտիկ առարկաների պակաս է եղել:</i> Ըստ 2022–2023 թ.-ի շրջանավարտների պատասխանների՝ օտար լեզուների դասավանդումը բուհում դրական ցուցանիշ է արձանագրել: Շրջանավարտների 30%-ից ավելին նշում է, որ աշխատանքի անցնելու համար ունի առավելապես գործնական հմտություններ զարգացնելու համար լրացուցիչ կրթության կարիք:</p>	
--	---	---	--

	<p>իսկ 48%-ը՝ որոշ չափով կարիք ունեն վերապատրաստման, որպեսզի բուհն ավարտելուց հետո կարողանան համապատասխան գործատուի մոտ աշխատել: 5%-ը նշել են, որ այդպիսի կարիք չունեն:</p> <p>Այն հարցին, թե շրջանավարտներն ընդհանուր առմամբ ինչպես են գնահատում ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը, այս տարի՝ 2022թ-ին «գերազանց» գնահատողների ընդհանուր տոկոսը փոքր ինչ բարձր է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Վերջինս կազմում է 17%- 9%-ի դիմաց: «Լավ» գնահատողների տոկոսը ավելացել է՝ 57% 60%-ի դիմաց, «բավարար» գնահատողների տոկոսը 30%-ից իջել է 16%, իսկ «անբավարար» գնահատողներ այս տարի չեն եղել:</p> <p>Այս տարվա շրջանավարտների 48%-ը նշել են, որ բուհում ուսանողների գիտելիքների գնահատումը միշտ օբյեկտիվ է, 29%-ը՝ մեծամասամբ օբյեկտիվ է, 12%-ը՝ երբեմն է օբյեկտիվ, իսկ 2%-ը՝ երբեք օբյեկտիվ չէ: 9%-ը</p>		
--	--	--	--

	<p>չի պատասխանել այս հարցին:  Համեմատելով նախորդ տարվա շրջանավարտների հարցման արդյունքների հետ՝ կարող ենք արձանագրել, որ այս՝ 2022թ շրջանավարտները շատ ավելի օբյեկտիվ են համարել բուհում ուսանողների գնահատման համակարգը, քան նախորդ տարվա շրջանավարտները, որը փաստում է բուհում իրականացված համապատասխան բարեփոխումների մասին:  ի տարբերություն նախորդ՝ 2021թ. շրջանավարտների, այս՝ 2022թ. շրջանավարտների ավելի մեծ տոկոսն է այն կարծիքին, որ բուհում վերջերս ներդրված ծածկագրված գրավոր քննությունների համակարգը նպաստում է արդար ու անաչառ գնահատմանը (37% ընդդեմ 26%-ի), օբյեկտիվ է ու թափանցիկ (33% ընդդեմ 28%-ի):  բուհում իրենց ստացած կրթությունից այս տարվա շրջանավարտներից առավել դժգոհ են կինեզիոլոգներն որոնց 16-20%-ը «բավարար» և «անբավարար» գնահատականներ է տվել</p>		
--	---	--	--

	<p>ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությանը: Բուհում օտար լեզուների ուսուցման արդյունավետությունը ակնհայտորեն բարելավվում է: Այսպես, եթե 2020-2021 ուստարում հարցված շրջանավարտների 33%-ն է «շատ արդյունավետ» գնահատել այն (5/5 բալլ), ապա 2022թ-ին այդ ցուցանիշը 43% է: Օտար լեզուների ուսուցման արդյունավետությունը բուհում 5 հնարավորից 4 միավոր գնահատողների տոկոսը նույնպես այս տարի բարձրացել է՝ 22-ից հասնելով 25 տոկոս թե շրջանավարտներն ընդհանուր առմամբ ինչպես են գնահատում ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը, այս տարի՝ 2022թ-ին «գերազանց» գնահատողների ընդհանուր տոկոսը փոքր ինչ բարձր է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Վերջինս կազմում է 29%՝ 25%-ի դիմաց: «Լավ» գնահատողների տոկոսը մնացել է անփոփոխ՝ 55%, «բավարար» գնահատողների տոկոսը 17%-ից իջել է 9%, իսկ «անբավարար» գնահատողներ այս տարի գրեթե չեն եղել (0.5%):</p>		
--	---	--	--

	<p>Այս տարվա շրջանավարտների 48%-ը նշել են, որ բուհում ուսանողների գիտելիքների գնահատումը միշտ օբյեկտիվ է, 29%-ը՝ մեծամասամբ օբյեկտիվ է, 12%-ը՝ երբեմն է օբյեկտիվ, իսկ 2%-ը՝ երբեք օբյեկտիվ չէ: 9%-ը չհպատասխանել այս հարցին:</p> <p>Համեմատելով նախորդ տարվա շրջանավարտների հարցման արդյունքների հետ՝ կարող ենք արձանագրել, որ այս՝ 2022թ շրջանավարտները շատ ավելի օբյեկտիվ են համարել բուհում ուսանողների գնահատման համակարգը, քան նախորդ տարվա շրջանավարտները, որը փաստում է բուհում իրականացված համապատասխան բարեփոխումների մասին:</p> <p>Ի տարբերություն նախորդ՝ 2021թ. շրջանավարտների, այս՝ 2022թ. շրջանավարտների ավելի մեծ տոկոսն է այն կարծիքին, որ բուհում վերջերս ներդրված ծածկագրված գրավոր քննությունների համակարգը նպաստում է արդար ու անաչառ գնահատմանը (37%</p>		
--	---	--	--

	<p>ընդդեմ 26%-ի), օբյեկտիվ է ու թափանցիկ (33% ընդդեմ 28%-ի):</p> <p>Մյուս կողմից՝ իջել է այն ուսանողների տոկոսը, ովքեր համարում են, որ ծածկագրված գրավոր քննությունների համակարգը մոտիվացնում է սովորելու համար (27-ից իջել է 14%):</p> <p>Բուհում ուսանողի գնահատականի վրա ազդող միակ գործոնը, որին այս տարվա շրջանավարտները ավելի բարձր դեր են տվել նախորդ տարվա հարցվողների համեմատ, դա <i>գիտելիքը կիրառելու կարողություններն</i> են: 2022թ. հարցվածների 65%-ը գնահատականի վրա ազդող հիմնական գործոն են համարել վերջինս (նախորդ տարվա 55%-ի դիմաց):</p> <p>Նշված մյուս գործոններին այս տարի ավելի քիչ նշանակություն են տվել հարցված շրջանավարտները:</p> <p>Այսպես, <i>դասաժամերին հաճախումները</i> որպես գնահատականի վրա ազդող գործոն նշել են այս տարվա հարցվածների 35%-ը (նախորդ տարվա 45%-ի դիմաց), <i>ինքնուրույն հետազոտական աշխատանքը</i> որպես գնահատականի վրա ազդող գործոն նշել են</p>		
--	---	--	--

	<p>այս տարվա հարցվածների 26%-ը (նախորդ տարվա 34%-ի դիմաց):</p> <p>Կարևոր է ընդգծել, որ գնահատականի վրա ազդող բացասական գործոններն այս տարի ավելի քիչ են հիշատակվել. <i>ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը</i> նշել է ընդամենը 5%-ը (նախորդ տարվա 23%-ի դիմաց), <i>ուսանողի ծանոթների</i> գործոնը նշել են ընդամենը 1%-ը (նախորդ տարվա 12%-ի դիմաց), <i>գնահատական համար կաշառք տալու</i>, ինչպես նաև <i>ուսանողի ծնողների դիրքի ազդեցության մասին</i> նշել են 2022թ. հարցվածների ընդամենը 1%-ը (նախորդ տարվա 7%-ի դիմաց), որը նույնպես բուհում ընթացող բարեփոխումների արդյունք է:</p>		
<p>Գործատուների կողմից շրջանավարտների մասնագիտական կարողությունների գնահատման արդյունքներ</p>			<p>2023-2024 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ—ի «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» բակալավրի կրթական ծրագրի աշխատաշուկայի կարիքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ</p>

		<ul style="list-style-type: none"> <li>• Կինեզիոթերապիստ աշխատանքի ընդունելիս կարևորագույն հանգամանքը բարձրագույն կրթությունն է (88,9%) և վերապատրաստումները (77,8%), սակայն պակաս կարևոր է մասնագիտական կրթությունը:</li> <li>• Կինեզիոթերապիստների աշխատանքի ընդունելիս մասնագիտական դիպլոմում մասնագիտական առարկաների գնահատականների կարևորության մասին գործատուների կարծիքները կիսվել են՝ 37%-ը կարևորվում է, 38%-ը՝ ոչ:</li> <li>• Կինեզիոթերապիստին աշխատանքի ընդունելիս մասնագիտական հմտություններից ամենակարևորներն են ընդհանուր մասնագիտական և նեղ մասնագիտական գիտելիքները, իսկ փափուկ հմտություններից՝ բժշկական էթիկայի տիրապետումը, հաղորդակցման</li> </ul>
--	--	---

			<p>հմտություններն ու թիմում աշխատելու ունակությունը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցման այն մասնակիցները, որոնք պրակտիկանտներ են ընդունել ՀՖԿՍՊԻ-ից, վերջիններիս հմտություններից ոչ մեկը «գերազանց» չեն գնահատել: Գործատուի մեծ մասը ՀՖԿՍՊԻ պրակտիկանտների հմտությունները հիմնականում գնահատել են «Բավարար» :</li> <li>• Այն գործատուները, որոնք չեն ունեցել ՀՖԿՍՊԻ պրակտիկանտներ, պատրաստ են ընդունել նրանց թե՛ պրակտիկայի, թե՛ արտագնա դասերի համար:</li> <li>• Ժամանակակից գործատուի հիմնական առաջարկը գործնական դասընթացների ավելացնում ու պրակտիկայի տևողության երկարաձգումն է: Առաջարկվում է նաև վերանայել դասախոսական առարկայացանկը՝ ներգրավել պրակտիկ ոլորտի</li> </ul>
--	--	--	---

			<p>մասնագետների:</p> <p><b>Գործատուների առաջարկները «Կինեզոլոգիա» կրթական ծրագրի բարելամանն ուղղված</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• գործատուի գլխավոր պահանջը գործնական ժամերի և պրակտիկայի տևողության ավելացումն է:</li> <li>• Կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով գործատուն առաջարկում է բուհում ստեղծել կինեզոլոգիայի դահլիճ՝ համապատասխան մասնագիտական գույքով և սարքավորումներով:</li> <li>• Կրթական ծրագրում ավելացնել գործնական դասերը:</li> <li>• Ավելացնել պրակտիկայի ժամերը և տևողությունը, սկսել այն ավելի ցածր կուրսերից:</li> <li>• Ուսումնական պրոցեսի ընթացքում զգալի ավելացնել պրակտիկ աշխատանքներ, որը ապահովելու</li> </ul>
--	--	--	---

		<p>համար անհրաժեշտ է ինստիտուտում ունենալ գործող մասնագիտական սենյակ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գործատուները մասնագետներ պատրաստելու հարցում բուհին ուղղել են նաև ավելի խորքային առաջարկներ.</li> <li>• Առաջին հերթին պետք է վերանայել դասավանդվող առարկաները և դրանց դասավանդման մեջ ներառված դասախոսների կոմպետենտությունը՝ անկախ նրանց դասավանդման ստաժից և գիտական կոչումից:</li> <li>• Անհրաժեշտ է դասավանդման ծրագրում ներառել «Կլինիկական մտածողություն» առարկան, ավելացնել գործնական պարապմունքների քանակը՝ բարելավելով պայմանները, թարմացնել ուսանողներին մատուցվող նյութերը, խորացնել «Կենսամեխանիկա» , «անատոմիա» առարկաների դասավանդումը:</li> </ul>
--	--	---

					<ul style="list-style-type: none"> <li>• Պրակտիկայի եկած բուհի «լավագույն» ուսանողները հաճախ ունենում են միջինից ցածր գիտելիքների մակարդակ: Պետք է խթանել ուսանողների ինքնակրթվելու և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները: Բացի այդ, պետք է նպաստել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների մասնակցելուն՝ որպեսզի տրված գիտելիքները ժամանակավրեպ չլինեն:</li> </ul> <p>Գործատուներից մեկը՝ «Գյումրի» վերականգնողական կենտրոնը ցանկություն է հայտնել 6-10 ուսանողի կամ շրջանավարտի ներգրավել իր կողմից իրականացվող վերապատրաստումներին և առաջարկում է տրամադրել իր ունեցած բազան հետազոտական աշխատանքներ կատարելու և/կամ մագիստրոսական թեզեր գրելու համար:</p>	
<b>Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ</b>						
Շրջանավարտների թիվը	38	36	34	26	33	26

Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով «գերազանց», «լավ» և «բավարար» գնահատական ներ ստացածների բաշխումը (%- ով)	31.57% 15.78% 50%	36.66% 16.66% 47.22%	20.6% 17.6% 13%	34.6% 15.4% 50%	42.4% 36.4% 21.2%	15.4% 30.8% 53.8%
Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը	21	3	14	4	24	1 9 այլ տարիներ նույն կրթական ծրագրի շրջանավար տ
Մասնագիտա- կան զբաղվածությա ն ցուցանիշը (%-ով)						
Ոչ մասնագիտա- կան զբաղվածությա ն ցուցանիշը (%-ով)						

Աղյուսակ 5

	Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/ գործողությունը	Կատարման ժամկետը
1.			
2.			
3.			
4.			
5.			

# 1. ՄԿԾ մշտադիտարկման ինքնավերլուծություն՝ ըստ չափանիշների և չափորոշիչների

## Չափանիշ 1. Կրթական ծրագրի բովանդակությունը և իրականացումը

**Չափորոշիչ 1.1 Կրթական ծրագրի շրջանակում կիրառվող ուսումնառության և գնահատման մեթոդները նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը:**

**1.1.1 ԿԾ-ի իրականացման համար առկա է մասնագիտական որակավորում և հմտություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ**

Ներկայացված է «Ֆիզիկական վերականգնման» ամբիոնի, ինչպես նաև կրթական ծրագիրը սպասարկող մյուս ամբիոնների ՊԴ անձնակազմը (տե՛ս Աղյուսակ 6):

**1.1.2 Բակալավրի/մագիստրոսի/լրացուցիչ կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները նպաստում են ուսանողակենտրոն և որակյալ ուսուցմանը:**

Ֆիզիկական վերականգնման ամբիոնում յուրաքանչյուր դասախոս առաջնորդվում է ներկայացրած թեմատիկ պլանով: Դասախոսության թեման ավարտվում է ամփոփումով: **Գիտելիքների ձեռքբերում:** Կարևոր նշանակություն ունի այն, որ ուսումնական տարվա ընթացքում դասախոսություններում ներկայացվում են կինեզիոթերապիայի ոլորտում ներդրվող նորարարական մեթոդները և կիրառվող տեխնիկաները՝ ըստ ախտաբանության կամ վնասվածքի:

Ամբիոնում ղեկավարվող մագիստրոսական և ավարտական աշխատանքներն ուղեցույց և տեղեկատվական նորարարական աղբյուր են հանդիսանում ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման համար: Դրան նպաստում են աշխատանքներում ներկայացված անհատական և խմբային հետազոտական դեպքերը, մեթոդները և ստացված արդյունքները, կատարված եզրակացությունները: Նշված աշխատանքներում զետեղված կինեզիոթերապիայի հաջողված մեթոդները նույնպես տեղ են գտնում դասընթացների շրջանակում:

Մասնագիտական հայալեզու գրականության ձեռքբերումը բուհի կողմից կարևոր նշանակություն ունի մասնագիտական գիտելիքների ձեռքբերման համար: Ամբիոնում տպագրվում են հայալեզու մասնագիտական գրականություն, սակայն դրանց քանակը բավարար չեն: Արտասահմանյան գրականության ներմուծումը, դրանց հայերեն թարգմանությունը նույնպես էական նշանակություն կունենան ուսանողների գիտելիքների ձեռքբերման համար:

**Գիտելիքների ամրապնդում:** Յուրաքանչյուր դասախոսություն սկսվում է նախորդ թեմայի քննարկումով, հարցերով: Օրվա թեմայի ներկայացումը կատարվում է ինտերակտիվ մեթոդներով, ամրապնդումն իրակացվում է հարցերով, քննարկումների, առաջարկությունների, բանավեճերի, քննադատությունների միջոցով:

**Գործնական գիտելիքների ձեռքբերում:** Յուրացման և ամրապնդման համար յուրաքանչյուր ուսանող պետք է կազմի թեմային համապատասխանող կինեզիոթերապիայի

անցկացման պլան, հիմնավորի, ներկայացնի հակացուցումները:

Որպես հետաքրքրությունը շարժող միջոց դասի շրջանակներում ներկայացվում են նորագույն տեխնիկաների կիրառման հնարավորությունը, սակայն ուսանողը ինքնուրույն պետք է ուսումնասիրի տվյալ տեխնիկան, այն ներկայացնի դասի ընթացքում, իսկ ամրապնդումը և տեխնիկայի կատարելագործումը պետք է իրականացվի դասախոսի օգնությամբ: Լսարանում պետք է քննարկվի տեխնիկայի ուժեղ և թույլ կողմերը, առաջարկվի նոր մեթոդներ:

Դասընթացը, և, կամ թեմաները հստակ կերպով արտացոլում են առաջադրված վերջնարդյունքները, որի դեպքում ուսանողը պետք է՝

- տիրապետի թեմային,
- վեր հանի առաջադրվող խնդիրները,
- կազմի կինեզիոթերապիայի համապատասխան պլան,
- ներկայացնի կինեզիոթերապիայի վարժությունների համալիրը, ներկայացնի հակացուցումները,
- ցուցադրի և բացատրի կատարման նպատակը և տեխնիկան,
- հանդես գա առաջարկություններով:

**Գիտելիքների ամրապնդման և փոխանցման գործընթացը** պահանջում է ունենալ կինեզիոթերապիայի դահլիճ՝ հագեցած բավարար քանակությամբ գործիքներով, մեխանոթերապիայի սարքերով: Ինստիտուտը տրամադրել է հետազոտական թախտեր և շիրմաներ, որոնք կազմում են վերը նշված ռեսուրսների նվազագույն տոկոսը: Նշված պայմաններում ուսումնական գործընթացը չի կարող ապահովել գիտելիքների մատուցման և ամրապնդման և փոխանցման լիարժեքությունը:

1.1.3 Ուսումնառության ակնկալվող արդյունքները հստակ արտացոլում են շահակիցների պահանջները:

Հաշվի առնելով արտաքին շահակիցների պահանջները, առ այն, որ նրանց մեծամասնությունը (77.8 %) կարևորում է նեղ և ընդհանուր մասնագիտական գիտելիքների ձեռքբերումը, ամբիոնը ներդրել է «Տերմինաբանություն» առարկան, որի շրջանակներում լուսաբանվում է առավելապես կինեզիոթերապիայի ոլորտին առընչվող լատիներեն և հունարեն տերմինները, նախադասությունները, քերականական առանձնահատկությունները: Ավելացվելու են ամբիոնում դասավանդվող բոլոր մասնագիտական առարկաների գործնական դասերի քանակը: Որոշ գործնական դասեր անց են կացվում կլինիկաներում՝ գիտելիքների ամրապնդման արդյունավետ իրականացման նպատակով:

Հարկ է նշել, որ հարցվածների շատ կարևոր են փափուկ հմտություններին տիրապետելը. 77.8%-ը ուսանողների տվյալ ունակությունը գնահատել են բավարար:

Հատուկ ուշադրություն է պետք դարձնել բուժման պլանի կազմելու ուսուցանմանը, քանի որ արտաքին շահառուների շրջանում հարցման արդյունքում 28.6% հարցվածները ուսանողների նշված կարողությունը գնահատել են բավարար և նույնքան քանակով՝ անբավարար և միայն 14.3%-ն է գնահատել «լավ»:

Հաշվի առնելով ներքին շահառուների պահանջները, պրակտիկայի ժամաքանակը կլինիկաներում ավելացվել է: Գնահատման համակարգի անաչառության վերաբերյալ ամբիոնում պարբերաբար անց են կացվում քննարկումներ: Ուսանողների կողմից ներկայացվել է պահանջ ավելացնել «Անատոմիա» առարկայի դասաժամերը՝ հաշվի առնելով առարկայի առանցքային նշանակությունը և այն անցկացնել մարզասարքերով հագեցած դահլիճում:

1.1.4 ԿԾ-ի շրջանակում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսուցման և գնահատման համակարգ, որը հասանելի է ուսանողներին:

Բուհում ներդրվել է «CLASSROOM» հարթակը, որի շնորհիվ ուսանողներին ներկայացվում է դասավանդվող նյութը, սեմինար պարապմունքների թեմաները, դրանց ընթացքում արծարծվելիք թիրախային հարցերը, առարկայի հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների թեմաները, գրական աղբյուրների ցանկը:

Դասավանդման համակարգը կազմված է **դասախոսություններից և գործնական դասերից:**

**Դասախոսություն:** Հնարավորինս լիարժեք իրագործելու համար կիրառվում են հետևյալ մեթոդները. տեսական գիտելիքների մատուցում, որը կազմվում է օրվա թեմայի պլանով: Ներկայացվում է դասի թեման, արդիականությունը, վիճակագրական տվյալները, որոնք պրոյեկտորների առկայության դեպքում մատուցվում են դիդակտիկ նյութերով, ներկայացվում է թեմայի գրական աղբյուրները, ուսանողներին տրվում են գրական աղբյուրների ցանկը, որոնման ձևերը: Դասախոսությունների ժամանակ կիրառվում են շրջված լսարան, սխալ դասախոսություն մեթոդները: Դասախոսության ավարտին կատարվում է ամփոփում, տրվում են հարցեր, իրականացվում են քննարկումներ:

**Գործնական դասեր:** Ներկայացվում են ռեաբիլիտացիայի մեթոդները, կինեզիոթերապիայի մեթոդը, էլման դիրքերը, վարժությունների օրինակները, տվյալ ախտաբանությանը համապատասխանող տեխնիկայի ձևերը, հատուկ հակացուցումները: Հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների ստեղծագործական, նոր մոտեցումներին և առաջարկություններին: Ուսանողները մաս են կազմում կատարման ուղեցույցին, կատարում են ճշգրտումներ և սեփական առաջարկություններ, ներկայացնում են իրենց հիմնավորումները:

**Բազմագործոն գնահատման համակարգ:** Ուսանողներին ներկայացվում է գիտելիքների և ինքնուրույն աշխատանքների համար տրվող բոլորնյան բալային համակարգը: Գնահատման համակարգում ներառվում են հաճախումները, ընթացիկ գնահատումը, ինքնուրույն աշխատանքների կատարումը և գիտելիքների ամփոփիչ գնահատականը (քննություն): Գնահատման անաչառության համար ուսանողներին ներկայացվում են կոնկրետ պահանջներ առարկայի վերաբերյալ, որտեղ նրանք պետք է ներկայացնեն իրենց գիտելիքները և կարողությունները: Վերջիններս նաև գնահատվում են ըստ իրենց ինքնուրույն աշխատանքների կատարման, նրանցում պահանջների իրագործման աստիճանի:

**Ընթացիկ գնահատում** (10 միավոր): Տարբեր դասախոսությունների կողմից իրագործվում է անհատական ձևով, սակայն սկզբունքը ընդհանուր է. դասի ընթացքում ուսանողի ակտիվությունը՝ դասերին մասնակցությունը ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հարցերի, առաջարկությունների, քննարկումներին մասնակցելը: Ըստ առարկայի առանձնահատկության, ընթացիկ գնահատումը կատարվում է նաև թեստային հարցման, ստուգողական գրավոր աշխատանքների ձևով, որտեղ յուրաքանչյուր հարցի պատասխանը գնահատվում է կոնկրետ միավորով:

**Ինքնուրույն աշխատանք** (20 միավոր): Ինքնուրույն աշխատանքներն իրենցից ներկայացնում են փոքրիկ հետազոտություն առողջ մարդու հետ (հնարավորության դեպքում՝ բուժառուի հետ՝ դասախոսի խստիվ վերահսկողությամբ): Սահմանվում է կոնկրետ ժամանակահատված՝ աշխատանքը ներկայացնելու համար:

**Հաճախումներ** (20 միավոր): Առավելագույնը 20 միավորը բաշխվում է ողջ կիսամյակի ընթացքում ըստ ժամանակացույցի իրականացած դասաժամերի քանակի վրա:

ԿԾ-ի շրջանակներում ներդրվել է գիտելիքների ստուգման թեստային համակարգ

Կիրառվում է նաև գիտելիքների ստուգման նախագծային ձևաչափ:

Պրակտիկաների իրականացման վերաբերյալ հաճախ ուսանողները նշում են պրակտիկ փորձի զարգացման պայմանների սակավության մասին՝ պայմանավորված թերի վերահսկողության, մեթոդիստի կողմից անհատական մոտեցման բացակայության, պրակտիկ աշխատանք չանելու և մշտապես դիտորդի դերում լինելու, բազայի վատ որակի, տետրը լրացնելու դժվարության և այլ գործոնները /Աուդիտի զեկույց/:

Պրակտիկայի գործընթացն ավելի ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ուսանողների ներգրավվածությունն ու շարժառիթն ավելացնելու համար մշակեց և ներդրվեց կլինիկական /մասնագիտական/ պրակտիկայի գործընթացի ներկայացման ամփոփիչ պիլոտային ձևանմուշ: Այս մոտեցման շնորհիվ ուսանողը մեթոդիստի և բուժհաստատության թերապիստի աջակցությամբ և հսկողությամբ «վարում է» բուժառուի ապաքինման գործընթացը: Փոփոխման բովանդակությունը կայանում էր նրանում, որ որպես վերջնարդյունք որոշվեց զերծ մնալ ավանդական տետրերի ներկայացումից, այլ ուսանողի կողմից բուժառուի հետ կատարված աշխատանքների ողջ ընթացքն անհրաժեշտ էր ներկայացնել շնորհանդեսի ձևաչափով: Այստեղ կարևորվում է առանձին ներկայացնել տվյալ հիվանդության էթիոլոգիան, պաթոգենեզը, վիճակագրությունը, անամնեզը: Առանձին ներկայացվում է հիվանդի վիճակի նախնական գնահատումը, բուժման պլանը, ֆիզիոթերապիայի անցկացման ձևն ու մեթոդները, բուժման արդյունքները, վերջում որպես ամփոփում ապագա թերապիստը հանդես է գալիս առաջարկություններով: Նման ձևաչափը խթան կհանդիսանա պրակտիկայում առավել մոտիվացված ներգրավմանը, ինչպես նաև ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ կհանդիսանա փորձի և վստահության ձեռքբերման լրացուցիչ նախադրյալ:

1.1.5 ԿԾ-ի շրջանակում առկա են գնահատման համակարգի բարելավման մեխանիզմներ:

Գնահատումը իրականացվում է ըստ դասընթացի առանձնահատկության՝ բանավոր հարցումների, ինքնուրույն աշխատանքների, ստուգողական գրավոր աշխատանքների,

թեստային գրավոր աշխատանքների հիման վրա: Անաչառ սկզբունք ցուցաբերելու համար յուրաքանչյուր դասախոս ինքն է մշակում գնահատման չափանիշները:

- **Գիտելիքների գնահատման օրինակ:** Սեմինար պարապմունքները անցկացվում է ստուգողական գրավոր աշխատանքի միջոցով, որը ավելի ակնառու է դարձնում աշխատանքի արդյունքը և բանավոր՝ տեսասահիկների միջոցով: Տրվում է կոնկրետ ժամանակահատված, որի անփոփոխությունը նախընտրելի է:
- Տեսասահիկների միջոցով գնահատվելու համար թեմայի շրջանակում ուսանողները պետք է ներկայացնեն թեմա, պատասխանեն առաջարկվող հարցերի որոշակի քանակին, որոնց տրվում է X միավոր:
- **Ինքնուրույն աշխատանքների գնահատման օրինակ:** Գնահատման կարգը յուրաքանչյուր դասախոս մշակում է անհատական ձևով, որը նաև կախված է առարկայի առաձնահատկությունից: Յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք նպատակահարմար է իրենից ներկայացնի փոքրիկ հետազոտություն, որտեղ կընդգրկվի մեկ առողջ անձ (հնարավորության դեպքում՝ մի քանիսը): Ուսանողին տրվում է առաջադրանք՝ թեման ներկայացնել տեսասահիկի միջոցով: Հատուկ պահանջներն են՝
  - 1. ուսումնասիրել այս կամ այն հիվանդությունը կամ վնասվածքը,
  - 2. ներկայացնել էթիոլոգիան և պաթոգենեզը,
  - 3. ներկայացնել ռեաբիլիտացիայի մեթոդները,
  - 4. ցուցադրել կինեզիոթերապիայի մեթոդները (այդ թվում նորերը) լսարանում,
  - 5. նշել կինեզիոթերապիայի կիրառման հակացուցումները,
  - 6. ներկայացնել օգտագործված գիտական աղբյուրները:

Ինքնուրույն աշխատանքները ներկայացվում են անհատական կամ խմբակային մեթոդով, ըստ ուսանողների նախընտրության:

Յուրաքանչյուր պահանջի (կետի) լիարժեք իրականացման համար տրվում է համապատասխան միավոր, որոնց հանրագումարը կկազմի ինքնուրույն աշխատանքների համար հատկացվող միավորը: Տրվում է կոնկրետ ժամանակահատված, որի անփոփոխությունը նախընտրելի է: Ինքնուրույն աշխատանքում թերությունների կամ բացթողումների դեպքում, այն հետ է ուղարկվում՝ դրանք վերացնելու և լրամշակելու համար: Եթե ուսանողը վերացրել է աշխատանքի թերությունները, գնահատվում է համապատասխանաբար:

1.1.6 ԿԾ-ի շրջանակում խրախուսվում է ուսանողի ստեղծագործական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

Ստեղծագործական ինքնուրույնություն ձեռք բերելու համար ուսանողին խորհուրդ է տրվում մեծացնել գիտական տեղեկատվության շրջանակը՝ կարդալով բազմաթիվ գրական աղբյուրներ, հետազոտություններ, մագիստրական և ավարտական աշխատանքներ, կատարել եզրահանգումներ, ունենալ առողջ քննադատական հայացքներ:

Հետազոտական աշխատանքների կատարման համար հաշվի է առնվում ուսանողի հետաքրքրության շրջանակը, նրա նախընտրած թեման:

